

Ն Ա Ր Ե Կ Ը

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Անապատական կեանքի զարգացումը ինչպէս այլուր, նոյնպէս Հայաստանի մէջ կապուած էր պետական կեանքին: Է.-Ը. դարերուն արաբական արշաւանքներու ժամանակ, երբ անկախ ու բարգաւաճ աւատական իշխանութիւնները կը խորտակուին, անոնց հետ վանքերն ալ կ'ամայանան, և վանական կեանքը կը թուլնայ: Իսկ Թ. և Ժ. դարերուն, երբ մեր աւատապետական երեք մեծ իշխանութիւնները, Բագրատունեաց, Սիւնեաց և Արծրունեաց, նորէն կը բարգաւաճին, վանական և անապատական կեանքը թափ կ'առնէ այս անգամ շատ աւելի արգիւնաւոր և մեծ չափերով:

Ժամանակի մտայնութիւնն էր որ մարդ իբր խոտ պիտի թառամի և անոր փառքը ծաղկի նման պիտի թթափի, ուստի լաւագոյն է բարի գործ կատարել և իր հոգիի փրկութեան աշխատիլ: Հայ իշխաններու մէջ տեսակ մը մրցանք կար վանքեր շինելու և բարեկարգութիւններ ընելու: Ասողիկ (Գ. Գիրք է. Դուռ) մանրամասն կը պատմէ թէ ինչ նշանաւոր վան-

մնալէ վերջ արտադրեցաւ վերագառնալ էլ-միածին:

Երկու Աթոռներու յարաբերութիւնները Պոլսէնիէի և Ազգ. Սահմանադրութեան կազմութեամբ բաւական հաստատուն և որոշ ձեւ մը ստացած ըլլալով այդպէս ալ շարունակութեան մինչեւ Ա. Համաշխարհային պատերազմը, որու ընթացքին թէ մոտաօրէն և թէ Թուրքիոյ մէջ նշանաւոր յեղափոխութիւններ պատահեցան, Պոլսէնիան և Ազգ. Սահմանադրութիւնը դադարեցան տիրող պետութեանց օրէնքներու մաս կազմել:

Կոստանդնուպոլսոյ վերջին պատրիարքը Մեսրոպ Նարոյեան, ընտրուած 1927ին, աշխատեցաւ յարաբերութեանց կապը պահել Մայր Աթոռին հետ՝ կարեւորութեան սահմանին մէջ:

Ն. Վ. Պ.

քեր շինուեցան Արաւ Բագրատունիի և Անանիա Մոկացի կաթողիկոսի ժամանակ, և Հայոց աշխարհում կը ծաղկէին ու կը պայծառանային կրօնական կարգերու հանդէսը: Ժամանակակից տարեգիրները բազմաթիւ վանքեր կը յիշեն, որոնց զըլխաւորները ըսինք արդէն:

Հայ վանքերն ու անապատները իրենց կենցաղով տարբեր չէին արեւելքի միւս նման հաստատութիւններէն: Գրիգոր Նաւրեկացից այս կարգի հաստատութիւններէն մէկուն՝ Նարեկայ Վանքին մէջ անաւ ու կազմուեցաւ:

Ինչ որ սակայն շեշտուած կողմը մնաց միշտ հայ վանքին և անապատին, ատիկա իր հոգիի դպրոց մ'ըլլալու զուգընթաց՝ մտքի ալ մարգարան մ'ըլլալն էր, ուր մեր ցեղին կեանքն ու քաղաքակրթութիւնը կարելի չափով գտած է իր արտայայտութիւնը, դարերու երկայնքով:

Առտ Երկաթի մահէն յետոյ եկող հարիւրամեայ խաղաղութեան շրջանին, ճարտարապետութեան, քանդակագործութեան և նկարչութեան հետ կը մշակուին կրօնական, պատմական և մեկնողական գրականութիւն մը, միակ և զլխաւոր երեսները գրեթէ մեր դասական գրականութեան բովանդակ շրջանին: Թէեւ կազմակերպուած դպրոցներ գոյութիւն չունէին, բայց վանահայրերը, յաճախ ուսեալ մարդեր, իրենց շուրջ կը խմբէին ուսումնասէր և ընդունակ հոգիները: Անոնց հմտութիւնը զլխաւորաբար Ս. Գրքի և կրօնական գրականութեան շուրջ կ'ամփոփուէր: Այսպիսիներ «մեծանունն ի գիտութիւն» եղած են Մովսէս, Դաւիթ և Պետրոս, որոնք լայն հաւակի տիրացած են իրենց ժամանակին: Անոնց կարգէն էին Ասողիկի յիշած Յիմաստակն Սամուէլ, բազմաշնորհ ի գիտութիւն գրող սրբոր և յերգս երած ժըշտութեանց Նոյն պատմիչը կը գրէ Յիսաւորի վանքի վանահայր Բարսեղի համար թէ կը լեցնէր «զամենեցուն զպակասութիւն կամ զվերակացութիւն գիտական և իմաստնական հանճարով»: Նոյնպէս Մովսէսականքը Յարբերգի մէջ հարուստ է եղած «բազմապայծառ և բնական իմաստնոյթ»: Այս գիտնական վարդապետներու մօտ, ինչպէս ըսինք, կը հաւաքուէին ուսումնասիրաւ բազմաթիւ երիտաւ-

սարդներ, յանձն առած ամեն զրկանք սիրով կը շտեմարանէին իրենց վարպետներու գիտցածը, որ ուրիշ բան չէր, բայց Սուրբ Գրքի մասին դպրոցական (scolastique) նորմալ մեկնաբանութիւններ, և դաւանական վէճերու շուրջ ծանօթութիւններ։ Այս կերպ պէտք է ստացած ըլլայ նոյնպէս Գր. Նախկինացին իր ուսումը առնուած Անանիա Նարեկացիի, իր մեծանուն ազգականին, որ իր կարգին սրանիւրուն պոետիկոսն էր։

Պէտք է մոռնալ նոյնպէս թէ, քաղաքական տեսակէտով, Թ. դարուն արաբական տիրապետութիւնը իր վայրէջքի մէջն է, և կեդրոնէն հեռու ինկող երկիրները անպատիժ իրենց անկախութիւնը կը փորձէին վերագտնել։ Բազմաթիւ տեւիս փաստը, և շատ չանցած Արծրունիք և Ռշտունիք կազմեցին փոքրիկ թագաւորութիւններ։ Աւելի քան դար մը տեւող այս խաղաղութիւնը պիտի քաջալերէր ու նպաստէր քաղաքակրթական ձեռնարկներու, տաճարներ, վաճփեր, պալատներ ու ամանանք այս բոլորը իմաստաւորող և անոնցմէ բխող գրական կեանքի մը վերադարձումը, մեր մեծագոյն գարեբէն մին պիտի ընէր Ժ. դարը։

Այս վերադարձումը Հայաստանի յատուկ չէր, արաբական կայսրութեան մէջ եւս Գուրանի շուրջ շեղուագիտական և աստուածաբանական շրջան մը կը սկսէր։ Սեւոր բոխչիներ, աստղագէտներ և իմաստասէրներ կը փորձէին կարելի ճիշդ իմացական նոր դար մը երեսնելու ժամանակագիրներ և պատմագիրներ ամէնուրեք, և մահմետական հողին վրայ կը զարգանար ժամանակին յատուկ օրէնսդիրութիւն մը որ այսօր իսկ ուշագրաւ է։ Կը ծնէին ու կը զարգանային միատիքական աղանդներ, որոնք ունէին իրենց զարմանալի վարդապետութիւնները, բանաստեղծութիւնը, մեթոտները, աստիճանները, հրաշքները և կատարելութեան հասած սուրբերու ազնուականութիւնը։

ՆԱՐԵԿԻ ՆԱԽԸՆԹԱՅԸ

Նարեկէն շատ առաջ քրիստոնէական կեանքը Հայաստանի մէջ քանիցս իր ծաղկման շրջաններն էր ունեցած։ Աղօթքներ գրելը առհասարակ եկեղեցւոյ հայրապետ-

ներուն սիրելագոյն գրադումներէն մին էր։ Մեզի ծանօթ աղօթագիրները երկու գլխաւոր և այլևս հասարակաց մեթոտներ կը կիրարկէին, կամ աղօթքը կը հիւսնէին յառաջագրուած նիւթին շուրջ՝ որոշ զգացումներու և մղումներու ներքեւ, ինչպէս փառաբանութիւն, շնորհակալութիւն, զղջում և ապաշխարութիւն, մաղթանք շնորհքի, հոգեւոր օրհնութեան, յաղթութեան, պաշտպանութեան կամ առողջութեան համար, և կամ ասոնց ամենուն կ'անդրադառնայ միանգամայն, խտացնելով զանոնք նոյն աղօթքին մէջ։

Այդ գրականութեանը մէջ կային յատկապէս անապատականին վերաբերողներ, որոնցմէ անապատականը կը օտանար իր մտաւոր սնունդը։ Եղիշէն Յիւսէ խրատու յաղաքս միանձանց ու Լուսաւորչին վերագրուած Յաճախապատում ճառերու իմ. գլխում նոյնպէս վանականներու յատուկ խրատներ կան։ Միանձանց համար խրատներ գրած է նաեւ Նարեկացիի ուսուցիչ Անանիան։

Ինքնուրոյն գրուած քններէն աւելի կային թարգմանածոյ վկայաբանութիւններ և եկեղեցւոյ նշանաւոր հայրերու գրուածքներ, խրատներ և աղօթքներ, ինչպէս Եփրեմ, Բարսեղի, Կիրիլի և Ոսկեբերանի գրուածքները։ Ասոնցմէ մեր մէջ ամէնէն աւելի տարածուած և ծանօթը եղած է Եփրեմ Ասորու օրհիւք աղօթիցը՝ որ քանիցս Նարեկացւոյ ողբերգութեան հետ է հրատարակուել, երկուքին միջև եղած զաւարժարի և ոճի նմանութեանը պատճառաւ։

Աղօթքներ աւ խրատներ ունի նաեւ Մանգակունին, և իր «Վասն խոտովանութեան» ճառը շատ նմանութիւններ ունի Նարեկացիի ողբերգութեանը հետ։ Հայ եկեղեցւոյ ժամերգութիւնը ճոխ է ապաշխարութեան աղօթքներով և քարոզներով։ Ճշմարտութիւնն ու անապատականները ու շաղկապութեան առարկայ են նաեւ մեր շաղկապներու մէջ։

Մեր գրականութեան, այսինքն գրաւոր գաղութեան, առաջին օրերէն սկսեալ հայ մտքի ազգային ստեղծագործութիւնը ամէնէն աւելի երեւան պիտի դար բանաստեղծութեանը մէջ։ Եկեղեցական բանաստեղծութիւնը ուրիշ բան չէ բայց օրհնագրութիւնը ընդհ. եկեղեցւոյ մէջ ծաղկած

ու զարգացած, քրիստոնէութեան աստ-
ուածաբանութեանը հանդիսաւորութիւն
տալու համար մեծեղեցւոյ կազմաւորման
Յոսիազըմանին կ'երգուէին հրէական սովո-
րութեանը սպառնալիքներ, և Ս. Գիրքէն
գարգ մը օրհնութիւններ, սակայն կոնա-
կան եռանդը տակաւ չբաւարարուեցաւ
միայն հին երգերով և յօրինեց նորերը:

Մեր Գեղեցւոյ հոգեւոր երգարանը
ճոխ է, թէև անոնց հեղինակներէն շատեր
կը ծնան անծանօթ: Թէ բանաստեղծու-
թեան այս տեսակը ինքնատուխ չէ եղած
մեր մէջ և ազդուած ու հետեւած է զխա-
ւարար Ս. Գիրքին և յոյն եկեղեցւոյ
օրհներգութեան զարգացման, ոչինչ կը
կորսնցնէ իր արժէքէն, երբ նկատի ունե-
ւանք մանաւանդ ընդհանուր և հասարա-
կաց առեւտրային նոյն սեռին: Թող թէ
հայ շարականոցը ունի ինքնաբերական
և իրեն յատուկ այնպիսի երգեր՝ որոնք միայն հա-
յոյն կրօնական շուրջ: Ոչ մէկ տարր եկեղեցի
մեզի չափ չափ չափ հոգեւոր երգեր ունի, որ
կը բարաբար մեր ժողովուրդի բանաստե-
ղծական նկարագիրը:

Եթէ յոյն և լատին հոգեւոր քերթողու-
թիւնը տիրապետուած է հայեցողական եւ
մոռալ մշտնաշարժով, մերը տիրապետուած
է ոգեղէնութեանը, գործով, որ այնքան
անհրաժեշտ է տեղի ազդեցութեան փոփոխ-
մանը շնորհիւ համար: Փառաւոր տարբեր չէր
կրնար ըլլալ. եթէ աղօթքը ճիշդ է առաւ-
տդին, անօգնականին, եթէ ան օրհներգն է
և շնորհակալութիւնը քարին, եթէ յոյսն
ու երազն է այս կեանքէն վեր ուրիշ կեանքի
մը, ով մեզ մէջ աւելի տառապներ, սիրեր և
երազներ է: Մեր ժողովուրդը տեսլապաշտ,
բարի, այս կեանքէն անգին տեսող և ան-
մահութեան կերպարանք տաքցող ժողո-
վուրդ է: և աղօթքը ընդառուութեան չափ
անհրաժեշտ տեղ բնական է իրեն համար:

Եթէ հոգին մեզած է արգելու համար,
ան եղած է աւելի մառաղօթքու համար:
Ան որքան համարձեղ մը, նոյնքան և աղօթք
մը, սաղմոս մըն է: Հոգին կ'աղօթէ ու-
րազհետեւ ինքզինքը կ'զգայ շատ պզտիկ՝
ընթացման աչք տնկողութիւն մէջ, զարուարե-
լի ամբար առջև, վերքերուն առջև՝ որոնք
կ'առնան մեր ներքը, աւելի փոքր՝ հոն,
սպիտակ փայլունք մեզքը և ուր մեզ
կը հաղած է փայլի խաղիք, պզտիկ՝ կեանքի

փորձութիւններուն դէմ, և աւելի պզտիկ՝
մահուան առջև: Այնքան տկար ենք որ կը
փնտռենք բնազդօրէն մեր վերեւ անհուն
գործ մը, հայրական զօրութեան մը որ մեզ
պաշտպանէ, ու մեր ձեռքերը կը միանան
և մեր ծունկերը կը ճկին անդիմադրելիօրէն
սիրտ առջև, և որուն կ'աղաղակենք խե-
լայեղ, սօգնութիւնս:

Ինչպէս կը տեսնուի, եթէ աղօթքը
տեսուածային է շնորհիւ Անոր, որմէ
կ'աղերսուի, խորապէս մարդկային ալ է,
շնորհիւ այն զգացումներուն, զորս մարդը
ունի: Աղօթքը գուտարն է վշտին և սիրտին:

Եւ որովհետեւ աղօթքը մարդկային է,
հետեւաբար տեղեկութեանն Ան կը հնչէ ամէն
տեղ, ուր կայ մարդ մը որ կը տառապի, սիրտ
մը որ կը փափախէ: Պիտաւոր զորք կ'ըսէր. և Ա-
ռանց պատուարի քաղաքներ կան, բայց
առանց տաճարներու քաղաքներ չկան:

Մարդիկ կ'աղօթեն սինակոններու մէջ,
մզկիթներու մէջ, Հնդկաստանի կուսու-
ներուն մէջ, մարդիկ կ'աղօթեն նաև բաց
երկնքի ներքև, անտառներու խորը և ան-
հորիզոն անապատներու աւազին: Ամէն ա-
ղօթք կրնայ հալել Աստուծոյ արտին՝ երբ
անկեղծ է, անկայն այնքան անկելի սրտա-
զին է ան երբ հոգիով և ճշմարտութեամբ
է, այնքան աւելի հզօր ալ լայն է իր թը-
տիւքը, երբ չէ ծանրացած աւելորդապաշ-
տութեամբ: Ամէնէն գեղեցիկ աղօթքը ա-
մէնէն պարզ աղօթքն է:

Գիտութիւնը մեզի կ'ըսէ թէ ոչ մէկ
ոյժ կը կորսուի բնութեան մէջ, թէ ամէն
թրթաւացում կը մխրճուի անասմանօրէն
եթերին մէջ: Նոյն է հոգիի ներկայիւ
թրթաւացման համար՝ որ աղօթքն է: Ան կը
ճամբորդէ անհունին մէջ և հպելէ վերջ
որտի մը որ մեզ վը օրէն, կը վերադառ-
նայ մեզի օրհնութեամբ:

Երբ ժողովուրդ մը կ'աղօթէ, ան կըր-
նայ անցնիլ ցաւազին տագնապներուն և
զուրս գալ անոնցմէ ճակատը վեր, խաղ-
քէն վերջ, վերադառնելով խաղաղութիւնը
իր հոգիին: Ան այս վերապէս կը գտնէ իր հա-
ւատքին մէջ հոգեկան վերանորոգման և
երկտաւարութեան ոյժ մը: Ահա թէ ին-
չու համար կայ ժողովուրդը անմահ է,
հաղաւթ իրեն եկած բոլոր չարիքներուն:
Նարեկացին հայ մըն է և մեծ աղօթող մը:

(3)

ԵՂԻՇԷՆ ՎԱՍԻՊԱՅԵՏ